**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

**«  26  » հունվարի 2018թ.** **N  20  - Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների 2017-2021 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» N 48 արձանագրային որոշման 11-րդ կետով հավանության արժանացած N1 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի 2018 թվականի միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով.

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող գյուղատնտեսության ոլորտի 2018 թվականի միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարի տեղակալներին՝ ապահովել Ծրագրում ներառված միջոցառումների իրականացումը:

3. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև 2018 թվականի ապրիլի 5-ը, հունիսի 20-ը, հոկտեմբերի 5-ը և նոյեմբերի 30-ը նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն ներկայացնել

հաշվետվություն՝ Ծրագրում ներառված միջոցառումների կատարման ընթացքի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված կարգի N 2 ձևի:

4. Նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ Հ. Ծպնեցյանին՝ ամփոփել սույն հրամանի 3-րդ կետով նախատեսված՝ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից ստացված հաշվետվությունները և մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ն ամփոփ հաշվետվությունը Հրամանով սահմանված ընթացակարգով ներկայացնել հաստատման:

5. Սույն հրամանի 3-րդ և 4-րդ կետերի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավարին:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

**ՆԱԽԱՐԱՐ՝**



**Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2018 թվականի -ի
N ... հրամանի

# ԾՐԱԳԻՐ
## Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող գյուղատնտեսության ոլորտի 2018 թվականի միջոցառումների

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Սերմնաբուծության զարգացման ծրագրի իրականացում | Բուսաբուծության ճյուղի ինտենսիվացման պայմանների ստեղծում, անհայտ ծագման սերմերի օգտագործման բացառում, մշակաբույսերի բերքատվության բարձրացում, բուսաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացում: Բերքատվության աճի արդյունքում բուսաբուծության ճյուղի արդյունավետության բարձրացում, սերմնանյութի և բուսաբուծական մթերքների որակի բարելավում, բուսաբուծական արտադրանքի մրցունակության բարձրացում | Աշոտ Հարությունյան<br><br>Ռոբերտ Մակարյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժնի պետ<br><br>«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ<br><br>«Բանջարաբոստանային եվ տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ | Ռ.Նազարյան<br><br>Մ.Աթոյան<br><br>Ա.Ղուկասյան<br><br>Գ.Սարգսյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանո-թագրու-թյուն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակա-տարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ<br><br>«Սերմերի գործակա-լություն» ՊՈԱԿ | Ռ.Կարախանյան<br><br>Վ.Մանուկյան | | | |
| 2 | Հանրապետությունում առաջնային սերմնաբու-ծության զարգացման և բարձր վերարտադրու-թյան սերմերով ինքնա-բավության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում | Սերմնաբուծության բնագավառում երկրի անկախության մակար-դակի բարձրացում: Բու-սաբուծական արտա-դրանքի արդյունավե-տության և մրցունա-կության բարձրացում: Բույսերի նոր սորտերի արտոնագրման և օգ-տագործման կանոնա-կարգում (տարեկան 10-15 նոր սորտերի օգտա-գործման թույլտվու-թյան ձևակերպում), սերմերի լաբորատոր հետազոտություն (տարեկան շուրջ 14.0 հազար տոննա) | Աշոտ Հարությունյան<br><br>Ռոբերտ Մակարյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>Գիտական և գյուղա-տնտեսության աջակցության կենտ-րոնների համա-կարգման բաժնի պետ<br><br>«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ<br><br>«Բանջարաբոստա-նային եվ տեխնիկա-կան մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ<br><br>«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ<br><br>«Սերմերի գործա- | Ռ.Նազարյան<br><br>Մ.Աթոյան<br><br>Ա.Ղուկասյան<br><br>Գ.Սարգսյան<br><br>Ռ.Կարախանյան<br><br>Վ.Մանուկյան | ՀՀ տարածքա-յին կառավար-ման և զար-գացման նա-խարարություն<br><br>ՀՀ մարզպե-տարաններ | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանո-թագրու-թյուն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակա-տարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | կալություն» ՊՈԱԿ | | | | |
| 3 | Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի իրականացում | Կոնդիցիոն սերմերի վերարտադրության ծա-վալների ավելացում տարեկան 3-5 %-ի չա-փով: Գյուղատնտեսա-կան մշակաբույսերի բերքատվության բարձ-րացում, ճյուղի ինտեն-սիվացում | Աշոտ Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպա-նության վարչու-թյուն<br><br>«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ | Ռ.Նազարյան<br><br>Վ.Մանուկյան | - | 2018թ. ընթացքում | |
| 4 | Հողերի ագրոքիմիական հետազոտության և բեր-րիության բարձրացման ծրագրի իրականացում | Հիմնավորված պարար-տացման սխեմաների կիրառման միջոցով գյուղատնտեսական նշանակության հողերի վիճակի բարելավում, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքա-տվության բարձրացում: Տարեկան շուրջ 170 գյուղական համայնք-ների համար ագրոքի-միական քարտեզների պատրաստում | Աշոտ Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպա-նության վարչու-թյուն<br><br>«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ | Ռ.Նազարյան<br><br>Վ.Դավթյան | - | 2018թ. ընթացքում | |
| 5 | Աջակցություն օրգանա-կան գյուղատնտեսության ծրագրի իրականացմանը | Օրգանական գյուղա-տնտեսական բարձր-արժեք արտադրանքի արտադրության ծավալ-ների և գյուղատնտեսու-թյունում տնտեսավա-րողների եկամուտների ավելացում, սննդա- | Աշոտ Հարությունյան<br><br>Արմեն Հարությունյան<br><br>Ռոբերտ Մակարյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպա-նության վարչություն<br><br>Անասնաբուծության և անասնաբուժու-թյան վարչություն | Ռ.Նազարյան<br><br>Լ.Տեր-Իսահակյան | - | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | մթերքի արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավում, գյուղատնտեսության ոլորտի մրցունակության մակարդակի բարձրացում | | Գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժին<br><br>Սննդամթերքի անվտանգության բաժին<br><br>Գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչություն | Մ.Խաչատրյան<br><br>Ա.Շիրվանյան<br><br>Խ. Աբաջյան | | | |
| 6 | Տավարաբուծության զարգացմանն ուղղված աջակցության միջոցառումների իրականացում | Ներմուծված տոհմային կենդանիների մեծ խմբաքանակ հատկացված տնտեսություններում տոհմասելեկցիոն աշխատանքների իրականացման միջոցով նոր տոհմային տնտեսությունների ձևավորում, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավում և տոհմային մատղաշի աճեցում: Տարեկան 600-650 գլուխ տոհմային մատղաշի աճեցում: | Աշոտ Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն | Լ.Տեր-Իսահակյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2018թ. ընթացքում | |
| 7 | 1.7 Գյուղատնտեսական | ՀՀ–ում բուծվող | Աշոտ | Անասնաբուծության | Լ.Տեր-Իսահակյան | - | 2018թ. | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | կենդանիների արհեստական սերմնավորման գործընթացի կանոնակարգման նպատակով համագործակցություն այդ բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտների հետ | գյուղատնտեսական կենդանիների գենետիկական ֆոնդի պահպանում, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավում: Տարեկան 25-30 հազ. գլուխ գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում: | Հարությունյան | և անասնաբուժության վարչություն | | | ընթացքում | |
| 8 | Հանքային պարարտանյութերի մատչելիության բարձրացման ծրագրի իրականացում | ՀՀ մարզերի կողմից ներկայացվող հանքային պարարտանյութերի պահանջարկի ամբողջական բավարարում: Ագրոտեխնիկական պահանջների կատարման նպաստում, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և արտադրության արդյունավետության բարձրացում | Աշոտ Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն | Ռ.Նազարյան | - | 2018թ. ընթացքում | |
| 9 | 1.9 Գյուղտեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների կիրառման միջոցով հավաքակազմի համալրման միջոցառումների իրականացում | Գյուղատնտեսությունում մեքենայացման մակարդակի բարձրացում, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծախսերի կրճատում, ոլորտում արտա- | Ռոբերտ Մակարյան | Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն<br><br>Գյուղատնտեսական տեխնիկայի պետա- | Հ.Ծպնեցյան<br><br>Վ.Ղուշչյան | - | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանո-թագրու-թյուն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակա-տարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | դրողականության բարձրացում | | կան տեսչություն<br><br>Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ | <br><br>Գ. Գևորգյան | | | |
| 10 | Համայնքների գյուղատն-տեսական ռեսուրսների կառավարման և մրցունա-կության երկրորդ ծրագրի իրականացում (վարկային ծրագիր) | Բնական կերահանդակ-ների արդյունավետ և համակարգված օգտա-գործում, դաշտային կերարտադրության զարգացում, անասնա-պահության արդյունա-վետության բարձրա-ցում, անասնապահա-կան տնտեսությունների եկամուտների ավելա-ցում: Ռեսուրսների կա-ռավարման ինստիտու-ցիոնալ կառույցների ստեղծում, կոոպերա-ցիայի խթանում: Անասնաբուժական սպասարկման ծառայու-թյունների բարելավում: Արժեշղթայի զարգաց-ման օժանդակություն: Ծրագիրն ընդգրկող հա-մայնքներում գյուղատն-տեսական կենդանիների մթերատվության բարձ- | Աշոտ Հարությունյան | Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ<br><br>Անասնաբուծության և անասնաբուժու-թյան վարչություն | Գ. Գևորգյան<br><br>Լ.Տեր-Իսահակյան | ՀՀ տարածքա-յին կառա-վարման և զարգացման նախարարու-թյուն<br><br>ՀՀ մարզ-պետարաններ | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | րացում 20-25 %-ի չափով | | | | | | |
| 11 | Գյուղատնտեսության ոլորտում տրամադրվող վարկերի մատչելիության բարձրացման, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում | Գյուղատնտեսությունում ագրոտեխնիկական և զոոտեխնիկական պահանջների կատարման, արդիական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ստեղծում, ոլորտի արդյունավետության և գյուղատնտեսական մթերքների մրցունակության բարձրացում: Տոկոսադրույքի սուբսիդավորմամբ տարեկան շուրջ 15 մլրդ դրամի վարկերի տրամադրում | Ռոբերտ Մակարյան<br><br>Արտաշես Կիրակոսյան | Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն<br><br>Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն | Հ.Ծպնեցյան<br><br>Կ.Ավետիսյան | ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018թ. ընթացքում | |
| 12 | Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը և գործունեության իրականացմանն աջակցություն՝ պետական ծրագրերի շրջանակներում | Գյուղատնտեսությունում տնտեսավարողների առջև ծառացած խնդիրների համատեղ լուծում, ռեսուրսային ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում, տնտեսավարողների գործունեության պայմանների բարելավում, գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացում | Ռոբերտ Մակարյան | Գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժին<br><br>Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժին<br><br>Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ | Մ.Խաչատրյան<br><br>Մ.Աթոյան<br><br>Գ.Գևորգյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2018թ. ընթացքում | |
| 13 | Գյուղատնտեսության խոր- | Գյուղատնտեսությունում | | Գյուղատնտեսության | Գ.Գևորգյան | | 2018թ. | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | իրդատվական ծառայությունների ծրագրի իրականացում | տնտեսավարողներին ագրոտեխնիկական պահանջների և արդիական տեխնոլոգիաների վերաբերյալ, բնական գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների հետևանքների մեղմման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում | Ռոբերտ Մակարյան | զարգացման հիմնադրամ<br><br>Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժին | <br><br>Մ.Աթոյան | | ընթացքում | |
| 14 | Աջակցություն ձկնաբուծական տնտեսություններում նորագույն տեխնոլոգիայի ներդրման ծրագրերի իրականացմանը | Ձկնաբուծությունում ջրի խնայողական ռեժիմի ներդրում, ձկնաբուծական արտադրանքի ծավալների ավելացում: Տարեկան 1-2 ձկնաբուծական տնտեսություններում նորագույն տեխնոլոգիաների ներդրում | Աշոտ Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն | Լ.Տեր-Իսահակյան | - | 2018թ. ընթացքում | |
| 15 | Մեղվաբուծության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում | Մեղվափեթակների, մեղրի արտադրության ծավալների և մեղվաբուծությունից ստացվող եկամուտների ավելացում: Տարեկան 3-5 հազ. մեղվափեթակների և 40-60 տոննա մեղրի արտադրության ծավալների ավելացում | Աշոտ Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն | Լ.Տեր-Իսահակյան | - | 2018թ. ընթացքում | |
| 16 | Գերնորմատիվային ջրա- | Ոռոգման ջրի կորուստ- | Աշոտ | Հողերի օգտագործ- | Ա.Բաղդասարյան | ՀՀ Էներգե- | 2018թ. | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանո-թագրու-թյուն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակա-տարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | պահանջարկ ունեցող հո-ղատարածքներում ոռոգ-ման արդյունավետ տեխ-նոլոգիաների ներդրում | ների կրճատման, ոռոգ-ման նորմայի կտրուկ իջեցման, սնուցման ռե-ժիմի բարելավման շնորհիվ մշակաբույսե-րի բերքատվության և որակի բարձրացում, հողօգտագործողների եկամուտների ավելա-ցում | Հարությունյան | ման և մելիորացիա-յի վարչություն<br><br>Բուսաբուծության և բույսերի պաշտպա-նության վարչու-թյուն | <br><br>Ռ.Նազարյան | տիկ ենթակա-ռուցվածքների և բնական պաշարների նախարարու-թյան ջրային տնտեսության պետական կոմիտե | ընթացքում | |
| 17 | ՀՀ տարածքում գյուղա-տնտեսական մշակաբույ-սերի բուսասանիտարա-կան իրավիճակի մշտադի-տարկում և գնահատում (մոնիթորինգ), բույսերի վնասատուների և հիվան-դությունների դեմ պայքա-րի  միջոցառումների մշա-կում | ՀՀ տարածքում բույսե-րի վնասակար օրգա-նիզմների հայտնաբե-րում և դրանց հետագա տարածման կանխար-գելում, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյու-նավետ ձևերի և մեթոդ-ների կիրառման հնա-րավորության ստեղ-ծում, հանրապետության տարածքում բուսասա-նիտարական անվտան-գության ապահովում, կարանտին և կարգա-վորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմ-ների բացահայտում և տարածման կանխար-գելում | Աշոտ Հարությունյան | Սննդամթերքի ան-վտանգության բա-ժին (առաջին կա-տարող՝ՀՀ գյուղա-տնտեսության նա-խարարության սննդամթերքի ան-վտանգության պետական ծառա-յություն)<br><br>Բուսաբուծության և բույսերի պաշտպա-նության վարչու-թյուն<br><br>«Անասնաբուժա-սանիտարիայի և բուսասանիտա-րիայի ծառայու-թյունների կենտ-րոն» ՊՈԱԿ | Ա. Շիրվանյան<br><br>Ռ.Նազարյան<br><br>Ն.Բարսեղյան | - | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 18 | Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում | Վնասատու օրգանիզմների կողմից հասցված վնասի տարածման արեալի նվազեցում, կորուստների կրճատում, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացում, բուսասանիտարական կայուն վիճակի ապահովում | Աշոտ Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ | Ռ.Նազարյան<br><br>Ն.Բարսեղյան | - | 2018թ. ընթացքում | |
| 19 | Պատվաստուկների և հակահամաճարակային այլ միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման ծրագրի իրականացում | Գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր 7 հիվանդության դեմ կանխարգելիչ, 3 հիվանդության դեմ ախտորոշիչ և մեղուների 1 հիվանդության դեմ մշակման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ապահովում | Աշոտ Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն<br><br>«Անասնաբուժասանիտարիայի բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ | Լ.Տեր-Իսահակյան<br><br>Ն.Բարսեղյան | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | 2018թ. ընթացքում | |
| 20 | Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ծրագրի իրականացում՝ համայնքային անասնաբույժների մասնակցությամբ | Գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր 7 կանխարգելիչ և 3 ախտորոշիչ և մեղուների 1 հիվանդության դեմ պայ- | Աշոտ Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն<br><br>«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի | Լ.Տեր-Իսահակյան<br><br>Ն.Բարսեղյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | քարի միջոցառումների իրականացում: Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կրճատում, անասնահամաճարակային իրավիճակի կայունացում | | ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ | | ՀՀ մարզպետարաններ | | |
| 21 | Հանրապետությունում առկա սպանդանոցների կարողությունների օգտագործմանն աջակցություն | Սպառողների համար անվտանգ մսի և մսամթերքի արտադրություն, կենդանիների ու մարդկանց համար ընդհանուր մի շարք վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելում ու շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում | Աշոտ Հարությունյան | Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն<br><br>Սննդամթերքի անվտանգության բաժին | Լ.Տեր-Իսահակյան<br><br>Ա.Շիրվանյան | ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 22 | Կենդանիների վարակիչ հիվանդությունների հսկողություն՝ անասնահամաճարակային մշտադիտարկումներ, կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հարուցիչների և կենդանիների անընկալունակության գնահատում | Կենդանիների համար առավել ախտածին և մեծ տնտեսական վնաս հասցնող, ինչպես նաև հանրային առողջությանը սպառնացող վարակիչ հիվանդությունների հայտնաբերում և տարածման կանխարգելում | Աշոտ Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին (առաջին կատարող՝ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | Ա.Շիրվանյան | | 2018թ. ընթացքում | |
| 23 | Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման կարողությունների զարգացում | Ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի արդիականացում, միջազգային պահանջներին համապատասխանեցում, ռիսկերի գնահատման ծառայությունների տեսակների և քանակների ավելացում | Աշոտ Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին (առաջին կատարող՝ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | Ա. Շիրվանյան | | 2018թ. ընթացքում | |
| 24 | Սննդամթերքում մնացորդային նյութերի հսկողության ծրագրերի իրականացում | Սննդամթերքում արգելված և թույլատրելի սահմանաչափ ունեցող նյութերի հայտնաբերում և դրանց նվազեցման համար նախադրյալների ստեղծում | Աշոտ Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին (առաջին կատարող՝ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | Ա. Շիրվանյան | | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 25 | Սահմանային վերահսկողության կազմակերպման և իրականացման արդիականացում | Միջազգային պահանջներին համապատասխան սահմանային հսկիչ կետերի շենքային և աշխատանքային պայմաններ, վերանայված սահմանային վերահսկողության ընթացակարգեր՝ սահմանային հսկիչ կետերի շենքային և աշխատանքային պայմանների բարելավման, միջազգային պահանջներին սահմանային վերահսկողության համապատասխանեցման միջոցով | Աշոտ Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին (առաջին կատարող՝ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | Ա. Շիրվանյան | | 2018թ. ընթացքում | |
| 26 | Սննդամթերքի անվտանգության ոլորտի լաբորատոր կարողությունների զարգացում | «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջազգային պահանջներին համապատասխան հավատարմագրման, լաբորատոր նոր սարքավորումների ձեռքբերման և միջազգային չափորոշիչներին համապատասխան լաբորատոր ծառայությունների | Աշոտ Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին (առաջին կատարող՝ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն) | Ա. Շիրվանյան | | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | մատուցում, հետազոտությունների տեսակների և քանակների ավելացում | | | | | | |
| 27 | Կենսական կարևորագույն սննդամթերքի տեղական արտադրության խթանում, ինքնաբավության մակարդակի բարձրացում | Ազգային պարենային հաշվեկշռում ընդգրկված հիմնական սննդամթերքի ինքնաբավության մակարդակն էներգետիկ արժեքով հաշվարկված կկազմի՝ 2017թ. 61-63 տոկոս, 2018թ.՝ 64-67 տոկոս, 2019թ.՝ 68-70 տոկոս 2020թ.՝ 71-73 տոկոս 2021թ.՝ 74-76 տոկոս | Աշոտ Հարությունյան<br><br>Ռոբերտ Մակարյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն<br><br>Ագրովերամշակման զարգացման վարչություն<br><br>Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն | Ռ.Նազարյան<br><br>Լ.Տեր-Իսահակյան<br><br>Գ.Ղազարյան<br><br>Հ.Ծպնեցյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2018թ. ընթացքում | |
| 28 | Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, բազմամյա տնկարկների տարածքների, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի ավելացում | Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները կկազմեն՝ հացահատիկային մշակաբույսերինը. 2018թ.՝ 213.0-215.0 հազ. հա, այդ թվում՝ ցորեն. | Աշոտ Հարությունյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն | Ռ.Նազարյան<br><br>Լ.Տեր-Իսահակյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | 2018թ.՝ 120.0-122.0 հազ. հա,<br>կարտոֆիլ.<br>2018թ.՝ 34.0-34.5 հազ. հա,<br>բանջարեղեն.<br>2018թ.՝ 31.0-31.5 հազ. հա,<br>բոստան.<br>2018թ ՝ 7.2-7.3 հազ.հա,<br>բազմամյա տնկարկներ.<br>2018թ.՝ 59.0-60.0 հազ. հա:<br>Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (տարեվերջին)՝<br>խոշոր եղջերավորներ.<br>2018թ.՝ 730.0-735.0 հազ. գլուխ,<br>ոչխարներ և այծեր.<br>2018թ.՝ 880.0-900.0 հազ գլուխ,<br>խոզեր.<br>2018թ.՝ 181.0-183.0 հազ. գլուխ: | | | | | | |
| 29 | Բուսական և կենդանական ծագման գյուղատնտեսական մթերքների (հումքի) արտադրության ծավալների ավելացում | Բուսաբուծական և անասնապահական մթերքների համախառն արտադրանքը կկազմի՝ հացահատիկային մշակաբույսեր. | Աշոտ Հարությունյան<br><br>Ռոբերտ Մակարյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>Անասնաբուծության | Ռ.Նազարյան<br><br>Լ.Տեր-Իսահակյան | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | 2018թ.՝ 700.0-710.0 հազ.տոննա, այդ թվում՝ ցորեն. 2018թ.՝ 415.0-420.0 հազ. տոննա, կարտոֆիլ. 2018թ.՝ 825.0-835.0 հազ. տոննա, բանջարեղեն. 2018թ.՝ 1135.0-1145.0 հազ. տոննա, բոստան. 2018թ.՝ 310.0-313.0 հազ.տոննա, պտուղ. 2018թ.՝ 395.0-405.0 հազ. տոննա, ընդամենը մսի իրացում (կենդանի քաշով). 2018թ.՝ 200.0-210.0 հազ.տոննա, կաթ. 2018թ.՝ 830.0-840.0 հազ.տոննա, ձու. 2018 թ.՝ 690.0-695.0 մլն հատ: | | և անասնաբուժության վարչություն<br><br>Ագրովերամշակման զարգացման վարչություն | <br><br>Գ.Ղազարյան | ՀՀ մարզպետարաններ | | |
| 30 | Ագրովերամշակման ոլորտում գործող ընկերությունների կողմից պտուղբանջարեղենի և խաղողի գնումների կանխատես- | Պտուղբանջարեղենի և խաղողի կանխատեսվող ծավալներով գնումների ապահովմանը խոչընդոտող գործոնների և առ- | Ռոբերտ Մակարյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն<br><br>Գյուղատնտեսական | Գ.Ղազարյան<br><br>Խ.Աբաջյան | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարա- | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | վող ծավալների և տեսականու մոնիթորինգի իրականացում: Գյուղատնտեսական հումքի գնումների ընթացքում օպերատիվ տեղեկատվության պարբերաբար հավաքագրում և ամփոփում | կա խնդիրների բացահայտում և գնումների գործընթացին հնարավորինս աջակցություն | Արմեն Հարությունյան | ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչություն | | րություն | | |
| 31 | Սննդամթերքի արտադրության, արտահանման և ներմուծման տեսականու և ծավալների մոնիթորինգի իրականացում | Ըստ տեսականու՝ սննդամթերքի ինքնաբավության մակարդակի գնահատում, այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության հստակեցում | Ռոբերտ Մակարյան<br><br>Արմեն Հարությունյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն<br><br>Գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչություն<br><br>Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն | Գ.Ղազարյան<br><br>Խ.Աբաջյան<br><br>Հ.Ծպնեցյան | - | 2018թ. ընթացքում | |
| 32 | Պտուղբանջարեղեն և խաղող վերամշակող ընկերությունների կողմից գյուղացիական տնտեսությունների հետ հումքի գնման պայմանագրերի կնքմանն աջակցություն, վերջինիս ընթացքի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքագրում | Գյուղատնտեսական մթերքի երաշխավորված իրացման և դրանց վերարտադրության հնարավորությունների ստեղծում | Ռոբերտ Մակարյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն | Գ.Ղազարյան | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն | 2018թ. ընթացքում | |
| 33 | Ագրոպարենային ոլորտի | Իրացման թիրախային | Ռոբերտ | Ագրովերամշակման | Գ.Ղազարյան | ՀՀ տնտե- | 2018թ. | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | միջազգային ցուցահանդեսների վերաբերյալ ոլորտում գործող տնտեսավարողներին տեղեկատվության տրամադրում | և նոր շուկաներ մուտքի ապահովում ու արտահանման ծավալների ավելացում | Մակարյան<br><br>Արմեն Հարությունյան | զարգացման վարչություն<br><br>Արտաքին կապերի վարչություն | Ա. Պետրոսյան | սական զարգացման և ներդրումների նախարարություն | ընթացքում | |
| 34 | Գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպում | Գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման շահավետ պայմանների ապահովում և ապրանքայնության մակարդակի բարձրացում | Ռոբերտ Մակարյան | Ագրովերամշակման զարգացման վարչություն | Գ.Ղազարյան | | 2018թ. ընթացքում | |
| 35 | Անտառների պահպանության աշխատանքների իրականացում | Անտառների պահպանության միջոցով անտառներում աճող վայրի պտղատու ծառաթփատեսակների վերարտադրության ապահովում | Աշոտ Հարությունյան | Անտառային տնտեսության բաժին | Ա.Պետրոսյան | | 2018թ. ընթացքում | |
| 36 | Գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպում ու իրականացում | Ողողումների, ջրածածկման, հողատարման երևույթների կանխման շնորհիվ կայուն եկամուտների ապահովում, հեղեղավտանգ տարածքներում գտնվող հողատարածքների գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավում | Աշոտ Հարությունյան | Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն | Ա.Բաղդասարյան | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 2018թ. ընթացքում | |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 37 | Սննդամթերքի անվտանգության ոլորտում շահագրգիռ մարմինների համագործակցության ապահովում (տեղեկատվության փոխանակում, սննդային գործոնով պայմանավորված հիվանդությունների ու սննդային թունավորումների դեպքերին, բռնկումներին արձագանքում, միջոցառումների համակարգված իրականացում) | Սննդային գործոնով պայմանավորված՝ հիվանդությունների ու սննդային թունավորումների դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետության բարձրացում | Աշոտ Հարությունյան | Սննդամթերքի անվտանգության բաժին (համակատարողը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն է) | Ա.Շիրվանյան | ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության | 2018թ. ընթացքում | Առաջին կատարողը՝ ՀՀ առողջապահության նախարարությունն է |
| 38 | Կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգի իրականացում | Յոդի անբավարարությամբ պայմանավորված հիվանդությունների նվազեցում և կանխարգելում | Աշոտ Հարությունյան<br><br>Ռոբերտ Մակարյան | Սննդամթերքի անվտանգության բաժին (համակատարողը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն է)<br><br>Ագրովերամշակման զարգացման վարչություն | Ա. Շիրվանյան<br><br>Գ.Ղազարյան | ՀՀ առողջապահության նախարարություն | 2018թ. ընթացքում | |
| 39 | Բուսական, կենդանական աշխարհի և բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի ձևավորման աշխատանքներ | ՀՀ բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների քանակական ու որակական բնութագրերի, վիճակի, տարածվածության վերա- | Աշոտ Հարությունյան | Անտառային տնտեսության բաժին | Ա.Պետրոսյան | ՀՀ բնապահպանության նախարարություն<br>ՀՀ գիտությունների | 2018թ. ընթացքում | Առաջին կատարողը՝ ՀՀ բնապահպանության |

| հ/հ | Միջոցառման անվանումը | Նպատակը (խնդիրը) | Իրականացնողները | | | | Ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոլորտը համակարգող | կատարողներ | կատարողների ղեկավարներ | համակատարողներ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | բերյալ համապարփակ տեղեկության առկայություն | | | | ազգային ակադեմիա (համաձայնությամբ) | | նախարարությունն է |
| 40 | Կարկտապաշտպան միջոցառումների իրականացում | Բնական աղետներից բերքի կորստի նվազում, բուսաբուծությունում վերարտադրության ապահովում, տնտեսավարողների եկամուտների կայունության ապահովում | Աշոտ Հարությունյան<br><br>Ռոբերտ Մակարյան | Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն<br><br>Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն | Ռ.Նազարյան<br><br>Հ.Ծպնեցյան | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | 2018թ. ընթացքում | Առաջին կատարողը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է |